ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՐՏԻ 2021թվականի N 30-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ,42-րդ և 43-րդ հոդվածներով,Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ,35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 11.01.2021թ <<Ինքնակամ կառույցը համայնքային սեփականություն ճանաչելու>> թիվ 1-Ա որոշումը,սեփականության իրավունքի N 15032021-06-0028 վկայականը և հաշվի առնելով,որ քաղաքացի Արթուր Թելմանի Սարգսյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռքբերելու գնման նախապատվության գրավոր /մուտք 29.03.2021թ.թիվ 82/ առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները՝

որոշում եմ

1.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող ք.Թումանյան,7-րդ փողոց թիվ 10/41 հասցեում գտնվող 44,4քմ արտաքին մակերեսով /ներքին մակերես՝ 41,2քմ/ ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0,00444 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը (վկայական՝ N 15032021-06-0028) գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած քաղաքացի Արթուր Թելմանի Սարգսյանին /ծնված 02.06.1966թ./:

2.Ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը,այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Նշված կառույցն իրականացրած անձը գնման նախապատվության առաջարկն ընունելուց հետո 30-օրյա ժամկետում պարտավորվում է Թումանյանի համայնքապետարանի բյուջե

վճարել 19802,4 (տասնինը հազար ութ հարյուր երկու դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ, որից՝ համայնքապետարանի 900265123274 հաշվեհամարին՝ 4262,4 (չորս հազար երկու հարյուր վաթսուներկու դրամ քառասուն լումա) ՀՀ դրամը որպես հողամասի օտարման գին,իսկ 900265123407 հաշվեհամարին՝ 15540 (տասնհինգ հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամը՝ կառույցի օտարման գին /Տարածագնահատման գոտիականության 16-րդ գոտի/:Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները ընդհանուր 19802,4 (տասնինը հազարութ հարյուր երկու դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացնել գրավոր առաջարկություն անշարժ գույքը վարձակալելու վերաբերյալ:Վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն տնօրինել 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման IV-րդ բաժնի 37-րդ կետով սահմանած կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 1
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 31-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կադաստրի կոմիտեի վկայականը՝1381244 հաստ. 30.06.2004թ.և քաղաքացի Սարգիս Արամայիսի Մանուկյանի դիմումը՝
որոշում եմ.

1.Քաղաքացի Սարգիս Արամայիսի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի (06-004-037-0000039) ծածկագրի 0,0182 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,Թումանյան քաղաք,19-րդ փողոց, 25 հողամաս) հասցեն:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 32-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կադաստրի կոմիտեի վկայականը՝1381245 հաստ. 30.06.2004թ.և քաղաքացի Սարգիս Արամայիսի Մանուկյանի դիմումը՝

որոշում եմ.

1.Քաղաքացի Սարգիս Արամայիսի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի (06-004-029-000019)ծածկագրի 0,0255 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,Թումանյան քաղաք,14-րդ փողոց, 2/3 հողամաս) հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ